Հավելված՝
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Գյումրի համայնքի
ավագանու 2019 թվականի
մարտի 12-ի N 45 -Ա որոշման

ՀԱՅՏ
Համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն
ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	*Գյումրի քաղաքի պատմության թանգարանի, կենտրոնական գրադարանի և պատկերասրահի նոր տարածքի վերանորոգում*
Մարզ	*Շիրակ*
Համայնքը /համայնքները	*Գյումրի*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*125 կմ, 0 կմ*
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	114000 մարդ (մշտական բնակչություն 2018թվականի հունվարի 1-ի դրությամբ)
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիճ տեղեկատվություն	*Համայնքը գազաֆիկացված և էլեկտրաֆիկացված է: Ջրամատակարարման ցանցի փոփոխման աշխատանքները ընթացքի մեջ են , որոնք իրականացվում են KFW-ի կողմից: Սիզամարգերի ոռոգման ցանցը բացակայում է: Առկա է փողոցային լուսավորության մոտ 7000 կետ, որոնց քանակը «Գյումրու քաղաքային ճանապարհներ» ծրագրի իրականացման ավարտին կհասցվի 11500-ի:*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	*Ծրագրով նախատեսվում է վերանորոգել ավելի քան 1600 քառ. մետր տարածք, որտեղ կգործի Գյումրու պատմության թանգարանը, կենտրոնական գրադարանը և գյումրեցի նկարիչների գործերի ցուցասրահը:* *Գյումրին որպես պատմամշակութային քաղաք իր պատմությունը,*

	կենցաղը, կոլորիտը սերունդներին և հյուրերին հավուր-պատշաճի ներկայացնելու կարիք ունի: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Գյումրու զարգացման առաջնահերթություններից է զբոսաշրջության զարգացումը, նման պատմական ժառանգության վերաբերյալ թանգարան ունենալը մեծ խթան կհանդիսանա զբոսաշրջիկների քանակի ավելացմանը: 1982թ. ստեղծվել է «Կումայրի արգելոց թանգարանը», որը հավաքագրել է Գյումրու պատմությանը առնչվող իրեր և առարկաներ: Թանգարանային այս հավաքածուները 19-20դդ. են, որոնց քանակը անցնում է 6000-ը: Ներկայումս այս ժառանգությունը պահվում է 2 տարբեր տարածքներում, որտեղ չկան համապատասխան պայմաններ ցուցադրության համար: Թանգարանային որոշ ֆոնդեր էլ գտնվում են Երևանում: Շատ ամնխիթար վիճակում է գտնվում նաև Գյումրու «Կենտրոնական գրադարանը»: Այն տեղակայված է վթարային շենքում, որտեղ քայքայված կտուրի պատճառով փայտե առաստաղը արդեն իսկ գոգավորվել է, իսկ պատուհանները՝ քայքայվել: Գրքային ֆոնդի պահպանման համար չկա օդափոխության համապատասխան համակարգ: Գրադարանը չունի կենտրոնացված ջեռուցման համակարգ և ընթերցասրահ: Այս պայմաններում անհնար է դառնում բնականոն աշխատանքային գործունեություն կազմակերպելը: Գյումրիում չկա գյումրեցի նկարիչների նկարների ցուցադրման սրահ: Սա ևս խիստ կարևոր և անհրաժեշտ պայման է քաղաքն ավելի ներկայանալի դարձնելու գործում: Վերոնշյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է բարեկարգ և հարմարավետ շենքային պայմաններ: Կարևորելով խնդրների նշանակությունը, հրատապությունը և անհրաժեշտությունը՝ Գյումրու համայնքապետարանի 1-ին հարկը՝ 1616 քառ. մ, ամբողջությամբ կծառայի վերը նշված ծրագրերի իրականացմանը:
Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրա-կանացման նպատակին	Ծրագրի իրականացման արդյունքում կունենանք 1616 քառ. մետր վերանորոգված տարածք՝ կոմունալ հարմարություններով և ընդհանուր ջեռուցման համակարգով: 700 քառ. մ տարածքում տեղակայված կլինի Գյումրու պատմության թանգարանը՝ իր պահոցների սենյակներով և ցուցասրահներով, որոնք ապահովված կլինեն ջեռուցման, օդափոխության և լուսավորության

	անհրաժեշտ համակարգերով: Շուրջ 550 քառ. մ տարածք կզբաղեցնի «Կենտրոնական գրադարանը», որը կունենա գրքային ֆոնդի պահպանման համար անհրաժեշտ պայմաններ, ընթացիկ աշխատանքների կազմակերպման և այցելուներին սպասարկման համար հարմարավետ և անհրաժեշտ պայմաններով աշխատասենյակներ, ինչպես նաև ընթերցասրահ: 369 քառ. մ տարածքում էլ կստեղծվի գյումրեցի նկարիչների աշխատանքների ցուցասրահ, որը նույնպես ապահովված կլինի ընդհանուր ջեռուցման, օդափոխության և լուսավորության համակարգերով: Այս ամենը հասանելի կլինի թե՛ քաղաքի բնակչության, և թե՛ հյուրերի համար: Սա մեծ հետաքրքրություն կառաջացնի հասարակության շրջանում, մեծ խթան կհանդիսանա ներքին և արտաքին զբոսաշրջության զարգացմանը և զբոսաշրջիկների քանակի ավելացմանը: Գյումրեցի արվեստագետները, նկարիչները կունենան մեծ և ընդարձակ ցուցասրահ, որտեղ հնարավորություն կունենան ցուցադրելու իրենց աշխատանքները, ավելի լայն շրջանակներին ներկայանալու և ճանաչում ձեռքբերելու նաև միջազգային ասպարեզում: «Կենտրոնական գրադարանի» աշխատանքային պայմանների և այցելուների որակյալ սպասարկումն ապահովելու համար ստեղծվող պայմանների բարելավման արդյունքում կավելանա գրադարանից օգտվողների թիվը, քաղաքացիները հնարավորություն կունենան տեղում օգտվելու իրենց անհրաժեշտ գրքերից, ծանոթանալ օրվա մամուլին և այլն:
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	1. Գնումների գործընթացի կազմակերպում 2. Արդյունքների ամփոփում, պայմանագրերի կնքում 3. Աշխատանքների իրականացում և ֆինանսավորում ըստ փուլերի 4. Վերահսկողություն, նախորդ փուլի աշխատանքների ընդունում
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող	Ծրագրով նախատեսված ծախսերը կապիտալ բնույթի են և իրականացման արդյունքում Գյումրի համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքը կմեծանա ծրագրի մրցույթի արդյունքում ձևավորված արժեքի չափով: Գույքը, որի վրա պլանավորվում է ազդեցությունը՝ սեփականության իրավունքով պատկանում է համայնքին:

հիմնական միջոցների արժեքի ավելացում	
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	Ծրագրի շահառուներն են Գյումրի քաղաքի ողջ բնակչությունը և հյուրերը: Շահառուները հնարավորություն կունենան ծանոթանալու Գյումրու բազմադարյան պատմությանը, կենցաղին, կոլորիտին, արհեստին ու արվեստին:
Ծրագրի իրականացման ընթացքում և արդյունքում ստեղծվող աշխատատեղեր	Ծրագրի իրականացման արդյունքում կստեղծվի 7 աշխատատեղ. վերականգնիչ- 1 գիդ- 3 բանվոր- 1 հավաքարար- 2
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	Նախորդ տարվա բյուջեն՝ 3583372000 ՀՀ դրամ .

	Պլան	Փաստացի	Տոկոս
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտները այդ թվում՝	3583372000	3581470700	99.9
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից	3374554100	3347725300	99.2
- Սեփական եկամուտներ	1346238300	1304602700	96.9
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	113106800	138034600	122.0
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, որից	3708119900	3366973700	90.8
- Վարչական բյուջեի ծախսեր	3177584900	2926239000	92.1
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	530535000	440734700	83.0
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, որից			
- ճանապարհաշինություն	283267300	206431900	72.8
- ջրամատակարարում			
- փողոցային լուսավորություն	3365000	2906500	86.3
- շենք շինութ. ձեռքբերում	65682000	65542900	99,7

- այլ մեքենաներ և սարքավոր.	161737700	153647500	95,0
-			

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

3704322300 *<< դրամ ,*

	Պլան
Ընդամենը համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝*	*3704322300*
- *Վարչական բյուջեի եկամուտներ, որից*	*3622896300*
- *սեփական եկամուտներ*	*1397606000*
- *Ֆոնդային բյուջեի եկամուտներ*	*81426000*
Ընդամենը համայնքի բյուջեի ծախսեր, *որից*	*4043628000*
- *Վարչական բյուջեի ծախսեր*	*3277134100*
-*Ֆոնդային բյուջեի ծախսեր*	*766493900*
Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից*	
- *Տրանսպորտային սարքավորումներ*	*249857600*
- *ճանապարհաշինություն*	*331457900*
- *այլ մեքենաներ սարքավորումներ*	*72575000*
- *փողոցային լուսավորություն*	*3365000*
- *շենք շինությունների կապիտալ վերանորոգում*	*81881800*

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման

Գյումրի համայնքի 2019 թվականի բյուջեի մուտքերի հաշվին սույն ծրագրի իրականացումը հնարավոր չէ: Այս հանգամանքը պայմանավորված է նրանով, որ համայնքի բյուջեի ֆինանսական միջոցները գրեթե ամբողջությամբ ուղղվում են համայնքի պարտադիր խնդիրների իրականացմանը:

Ֆինանսական միջոցներից մի փոքր մաս էլ ուղղված է համայնքի կամավոր խնդիրների լուծմանը, որով փորձ է արվում ինչ-որ չափով մեղմելու համայնքի կարիքավոր և սոցիալապես խիստ անապահով բնակչության հոգսերը:

անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	
Ծրագրի ընդհանուր բյուջեն	*100000000 ՀՀդրամ (100%)*
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	*60000000 ՀՀ դրամ (60 %)*
Այլ ներդրողներ	*0 ՀՀ դրամ (0 %), նշել ներդրողի անունը:*
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբ__մայիս__2019թ. Տևողությունը՝ ...9 ամիս....*
Ծրագրի ծախսերը	*Ծրագրի իրականացման համար նախատեսվել է ծախսել 100000000 ՀՀ դրամ, որը հաշվարկվել է նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա:*
Ամսաթիվ	*"_22_"___փետրվարի____2019թ.*

Համայնքի տնտեսական զարգացման հարցերով պատասխանատու Կարեն Բադալյան

Հեռախոս, էլ.Փոստ 94/ 90-90-41, badalyan.karen74@gmail.com

Համայնքի ղեկավար **__Սամվել Բալասանյան__**

(անուն, ազգանուն)

ԿՏ